ԴԱՍ 15

Էջ 122

Առաջադրանք.

Կարդացեք հետևյալ դեպքերի մասին և լրացրեք աղյուսակը: Որոշեք, թե արդարության որ բնագավառներին են դրանք առնչվում և որքանով: Յուրաքանչյուր դեպքի համար պատասխանեք վերջում տրված հարցերին:

Ա. Մրցույթից հետո երեք մասնակից մրցանակներ ստացան լավ ելույթի համար:

Բ. Ուսուցիչը որոշ աշակերտների, որոնք չէին կատարել տնային առաջադրանքը, հանձնարարեց դասերից հետո մնալ դասարանում այն կատարելու համար:

Գ. Որոշ երկրներում գողերին պատժում են մահապատժով կամ կտրել են տալիս նրանց ձեռքերը:

Դ. Անցյալում կանայք իրավունք չունեին տղամարդկանց հետ հավասար մասնակցելու ընտրություններին:

Ե. Երբ գողին բանտարկեցին խանութը թալանելու կասկածով, դատարանը պաշտպան նշանակեց մեղադրվողի շահերը դատաքննության ժամանակ ներկայացնելու համար:

Զ. Երբ պարզվեց, որ A ֆիրմայի ծխախոտի դաշտերում աշխատող կանայք հիվանդացել են քաղցկեղով, դատարանը վճիռ կայացրեց, ըստ որի A ֆիրման պարտավոր էր վճարել այդ կանանց բուժման հետ կապված ծախսերը:

Է. Որպեսզի ձեռք բերեք վարորդական իրավունք, Դուք պետք է ունենաք համապատասխան գիտելիքներ երթևեկության կանոնների մասին, վարելու համապատասխան հմտություններ և որոշակի տարիք:

Ը. Առաջին ատյանի դատարանի դատավճիռը քննվեց վերաքննիչ դատարանում և բեկանվեց, քանի որ կասկածյալի հանդեպ բանտարկելիս ու խուզարկելիս կիրառվել էին անօրինական գործողություններ:

	Բաշխման արդարություն	Ուղղման արդարություն	Ընթացակարգի արդարություն
Ա.			
Բ.			
Գ.			
Դ.			
Ե.			
Զ.			
Է.			
Ը.			